


Programmatic Cooperation Framework for
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(2015թ. հոկտեմբերի 26 - դեկտեմբերի 4)



Մույն փաստաթուղթը պատրաստված է Եվրամիության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Աջակցություն պրոֆեսիոնալ և որակյալ լրագրությանը՝ Ինքնակարգավորման մարմինների տարածաշրջանային ցանցի միջոցով» ծրագրի ֆինանսական օժանդակությամբ: Փաստաթղթում արտահայտված տեսակետները որևէ կերպ չեն կարող ընկալվել որպես Եվրամիության կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական կարծիքի արտացոլում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2015թ. հոկտեմբերի 26 - դեկտեմբերի 4)	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԱՍԻՆ	10
ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	15
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ	
2015թ. հոկտեմբերի 26 - դեկտեմբերի 4 (ամփոփիչ)	17
2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5 (առաջին փուլ)	32
2015թ. նոյեմբերի 6-19 (երկրորդ փուլ)	40
2015թ. նոյեմբերի 20 - դեկտեմբերի 4 (երրորդ փուլ)	55

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2015թ. հոկտեմբերի 26 - դեկտեմբերի 4)

Հետազոտված հայաստանյան վեց համազգային հեռուստաալիքների կողմից ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեին նախորդած քարոզարշավի լուսաբանումն ընդհանուր առմամբ կատարվել է հանրաքվեի մասին ՀՀ օրենսդրության շրջանակներում: Համապատասխան կարգավորող ակտերով նախատեսված հավասարակշռված լուսաբանումից որոշակի շեղումները բացատրվում են ոչ այնքան հետազոտված հեռուստաալիքների քաղաքականությամբ, որքան մասնավորապես քարոզարշավի որոշ մասնակիցների պասիվությամբ և ՉԼՄ-ների հետ երկրի ղեկավարի շփման բոլոր հազվադեպ առիթների լայն լուսաբանման ավանդույթներով:

Սահմանադրության փոփոխությունների թեմայով հետաքրքրվող հեռուստադիտողները հնարավորություն են ունեցել ծանոթանալու Հիմնական օրենքում նախատեսված փոփոխությունների մասին տարբեր կարծիքների: Հեռարձակողները ձգտում էին այնպես կազմել իրենց ծրագրերը, որպեսզի նախագծի նկատմամբ արտահայտված դիրքորոշումները հավասարակշռվեին հակառակ կարծիքներով: Մոնիտորինգի ենթարկված երկու հեռուստաալիքներում (Հայաստանի Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք և «Արմենիա») դա արվում էր նաև «Այո և Ոչ» ռեալիթի շոուի լուսաբանման շնորհիվ, որը նախաձեռնել էին «Արմնյուզ» և «Ա1+» հեռուստաընկերությունները: Թեև դրանում կողմերի ներկայացվածությունը հարցեր է ծնում, և դա ոչ թե այս ՉԼՄ-ների մեղքով, այլ այն պատճառով, որ քարոզարշավի որոշ սուբյեկտներ չցանկացան մասնակցել նման կրեատիվ նախագծի:

Հետազոտված հեռարձակողների մեծամասնությունը ձգտում էր քարոզարշավը լուսաբանել ինչպես նորությունների, այնպես էլ՝ հարցազրույցների ձևաչափով: Եղել են նաև բանավեճի օրինակներ: Լրագրողներն իրենց առջև նպատակ էին դնում բանավեճը բերել բովանդակային հարթություն: Հարկ է նշել, որ հետազոտության ողջ ընթացքը պայմանականորեն բաժանվել է երեք փուլերի. 2015թ. հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5, նոյեմբերի 6-19, նոյեմբերի 20 - դեկտեմբերի 4 (*մոնիտորինգի մեթոդաբանությունը և հետազոտված ՉԼՄ-ների ցանկը՝ տես «Ընդհանուր տեղեկություններ մոնիտորինգի մասին» և «Հետազոտված ՉԼՄ-ների ցանկը և համառոտ բնութագիրը» բաժիններում*): Եվ եթե մոնիտորինգի առաջին փուլում գերակշռում էին ընդհանուր քաղաքական բնույթի հայտարարությունները և հանրաքվեի նախապատրաստության և քվեարկության ընթացակարգերի գնահատականները, ապա հետագայում գնալով ավելի շատ ուշադրություն էր դարձվում ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի բովանդակությանը:

Դրա հետ մեկտեղ եթերում քարոզարշավը ավելի կարճ ստացվեց, քան անհրաժեշտ էր Սահմանադրության փոփոխությունների գործընթացում առավելագույն թվով ՀՀ

քաղաքացիների ներգրավելու համար: Այն դեպքում, երբ քարոզարշավի պաշտոնական սկիզբը հոկտեմբերի 10-ին էր, հեռուստատեսությամբ դրա մեկնարկը փաստացի տրվեց գրեթե մեկ ամիս անց: Թեև հայաստանյան լրատվամիջոցներին ոչինչ չէր խանգարում խմբագրական եթերում լուսաբանել Հիմնական օրենքի փոփոխությունների թեման, սակայն այն փաստը, որ համաձայն ՀՀ ԿԸՀ-ի կողմից սահմանված կարգի, հանրային հեռարձակողի եթերում քարոզարշավի անցկացման համար վճարովի և անվճար ժամանակ հատկացվել է միայն նոյեմբերի 6-ից սկսած, ինքնին գործողությունների յուրօրինակ ուղեցույց դարձավ բոլոր հեռուստաընկերությունների համար: Եվ միայն մոնիտորինգի պայմանական երրորդ փուլում հանրաքվեին նվիրված խմբագրական նյութերի տոկոսը անցավ հետազոտված հեռուստահաղորդումներում ուսումնասիրության ենթարկված նյութերի ընդհանուր քանակի 10%-ից (10.2%): Հաշվի առնելով քարոզչության բլոկները, որոնց տևողությունը նույնպես աճում էր քվեարկության օրվա մոտենալուն զուգահեռ, կարելի է ասել, որ հենց վերջին երկու շաբաթներում Սահմանադրության փոփոխությունների թեման հիմնական դարձավ համազգային ալիքներում: Առաջին և երկրորդ պայմանական փուլերում հանրաքվեի լուսաբանումը եղել է համապատասխանաբար 6.3% և 7.1%:

Հանրաքվեների քարոզարշավների նորմատիվ-օրենսդրական կարգավորման և իրավակիրառ պրակտիկայի խնդիրները արտացոլվել են նաև եթերում տարբեր շահագրգիռ կողմերի ներկայացվածության վրա: Թեև ՀՀ Ազգային ժողովում ներկայացված 6 քաղաքական կուսակցությունները Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ իրենց վերաբերմունքով հավասարապես էին բաժանվել (երեքը՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ) և Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ) հանդես էին գալիս նախագծի օգտին, և երեքը՝ «Հայ ազգային կոնգրեսը» (ՀԱԿ), «Օրինաց երկիրը» (ՕԵԿ) և «Ժառանգությունը»՝ նախագծին դեմ) քարոզարշավի վերջնագծին մոտենալուն զուգահեռ՝ «այո»-ի խորհրդարանական ճամբարը գնալով ավելի մեծ առավելություն էր ստանում «ոչ»-ի ճամբարի նկատմամբ: Մոնիտորինգի անցկացման ողջ ժամանակահատվածի (հոկտեմբերի 26 - դեկտեմբերի 4) արդյունքներով Սահմանադրական ռեֆորմի կողմնակիցների լուսաբանումը մոտավորապես 1.5 անգամ գերազանցել է նրանց ընդդիմախոսների լուսաբանմանը՝ ինչպես եթերային ժամանակի ծավալով, այնպես էլ անդրադարձների հաճախականությամբ:

ՀՀ հիմնական օրենքի փոփոխությունների օգտին հանդես եկող խորհրդարանական քաղաքական ուժերի՝ եթերաժամանակի ծավալի առավելությունը անդրադարձել է նաև արտահայտությունների նշանային բնութագրիչների հարաբերակցության վրա: Մոնիտորինգի երեք փուլերի ընթացքում արձանագրվել է քարոզարշավի մասնակից այս պայմանական «առաջին կատեգորիայի» ներկայացուցիչների 248 արտահայտություն՝ հօգուտ և 153՝ ընդդեմ փոփոխությունների նախագծի կամ հանրաքվեին համապատասխան քվեարկության կոչ անող:

Այս հարաբերակցությունը ինչ-որ չափով փոխհատուցվում է հեռուստաալիքների կողմից պայմանական «երկրորդ կատեգորիայի» ներկայացուցիչներին (անկախ պատգամավորներ/արտախորհրդարանական կուսակցություններ, քաղաքացիական հասարակություն/փորձագիտական հանրություն/ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձևավորված նախաձեռնությունների ներկայացուցիչներ, Vox Populi) անդրադարձների հաշվին: Այստեղ հանրաքվեին 421 անդրադարձներից 74-ը դրական էին, իսկ 243-ը՝ բացասական: Ընդ որում, բացասականի օգտին հավասարկշռություն արձանագրվել է այս պայմանական

կատեգորիայի բոլոր խմբերում, բացառությամբ՝ Vox Populi-ի: Ընդհանուր առմամբ հետազոտված ծրագրերում քարոզարշավի մասնակից բոլոր խմբերին բաժին է ընկել Սահմանադրության փոփոխությունների և հանրաքվեի 330 դրական, 396 բացասական և 526 չեզոք հիշատակում:

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ որպես նշանային բնութագրիչով անդրադարձ չեն արձանագրվել հանրաքվեի ընթացակարգի, այդ թվում՝ հոկտեմբերին ակտիվ քննարկվող նույնականացման քարտերով քվեարկության գնահատականները: Այս հարցին անդրադարձները, թեև դրանցում գերակշռում էր կտրուկ քննադատությունը, գնահատվում էին որպես չեզոք (և դրանց տրամադրված եթերաժամանակն էլ չէր արձանագրվում), քանի որ դրանք Սահմանադրության փոփոխությունների նախագծին անմիջական առնչություն չունեին:

«Երկրորդ կատեգորիայի» մասին խոսելիս հարկ է ընդգծել հանրաքվեների քարոզարշավների նորմատիվ-օրենսդրական կարգավորման հավանաբար հիմնական խնդիրը: Խորհրդարանական կուսակցություններին որպես քարոզարշավի գլխավոր սուբյեկտ ճանաչելը կամա թե ակամա հուշել է հեռարձակողներին, որ գործընթացով շահագրգիռ մյուս մասնակիցներին կարելի է անտեսել: Նույնը վերաբերում է քարոզարշավի համար վճարովի եթերի տրամադրմանը: Այսպես, մոնիտորինգի ողջ ընթացքում «Արմենիա» հեռուստաալիքի հետազոտված ծրագրերը ոչ մի անգամ չեն անդրադարձել «Չե՛ք անցկացնի» և «Նոր Հայաստան» նախաձեռնությունների՝ Սահմանադրության փոփոխությունների թեմային անմիջականորեն առնչվող գործողություններին և դիրքորոշումներին, թեև այդ նախաձեռնությունները ձևավորվել են հատուկ հանրաքվեի կապակցությամբ: Իսկ Հայկական Երկրորդ հեռուստաալիքը (Հ2) և «Շանթը» չեն լուսաբանել «Չե՛ք անցկացնի» նախաձեռնությունը:

Քաղաքական արշավների լուսաբանման համընդհանուր սկզբունքների նկատմամբ արհամարհական մոտեցման օրինակ կարող է ծառայել «Եռանկյունի» ծրագիրը Հայաստանի Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի (Հ1) եթերում: Այն, որ դրա առաջին թողարկումը հեռարձակվել է նոյեմբերի 6-ին (հեռուստատեսությամբ քարոզչության փաստացի մեկնարկի օրը), ինչպես նաև փաստը, որ դրա հինգ թողարկումներից երկուսը նվիրված են եղել Սահմանադրության ռեֆորմին, անուղղակիորեն վկայում են, որ այդ շաբաթական հաղորդումը զուգադիպեցվել է հանրաքվեին: Ընդ որում, բանավիճային այդ շոուն վարում է ՀՀ կրթության և գիտության նախարար, իշխող Հանրապետական կուսակցության նախագահի տեղակալ Արմեն Աշոտյանը (կուսակցության ղեկավարը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախաձեռնության հեղինակ, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն է): Անկախ ծրագրի բովանդակությունից և դրանում վարողի դերից՝ վերը նշված հանգամանքները թույլ են տալիս հանրայինի եթերում «Եռանկյունու» հեռարձակումը գնահատել որպես շահերի բախման ակնհայտ նախադեպ:

Քվեարկության օրվա մոտենալուն զուգահեռ, ԶԼՄ-ներում ավելի էր դրսևորվում այն ընկալումը, որ հիմնական բանավիճող կողմերը ՀՀԿ-ն և ՀԱԿ-ն են: Մոնիտորինգի ողջ ընթացքում հանրապետականները անվիճելիորեն գլխավորում էին հատկացված եթերային ժամանակով, իսկ խորհրդարանական կուսակցություններից ՀԱԿ-ը ոչ միայն հանրազումարային ցուցանիշով երկրորդ տեղում էր հետազոտված բոլոր հեռուստաալիքներում, այլ նաև՝ ստացել էր լուսաբանման ավելի մեծ ծավալ, քան «ոչ»-ի ճամբարի մյուս երկու կուսակցությունները՝ «Ժառանգությունը» և «ՕԵԿ»-ը՝ միասին վերցրած:

ՀՅԴ-ն, որն առաջին երկու պայմանական փուլերում ընկալվում էր որպես «այո»-ի համար ՀՀԿ-ին գրեթե հավասար պատասխանատվություն ստանձնած սուբյեկտ, երրորդ փուլում ստացել է հանրապետականներից մոտավորապես 10 անգամ պակաս լուսաբանում: Իսկ «ԲՀԿ»-ն ողջ քարոզարշավի ընթացքում պասիվություն է պահպանել և հետևաբար հեռուստատեսային լուսաբանման ծավալով էականորեն հետ է մնացել խորհրդարանական մյուս կուսակցություններից:

ՀՀԿ-ն լուսաբանման ծավալով մյուս կուսակցությունների նկատմամբ բավական մեծ առավելություն է ստացել հիմնականում մոնիտորինգի երրորդ պայմանական փուլում: Եվ դրա գլխավոր պատճառը հայաստանյան հեռուստաընկերություններին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի տված հարցազրույցի ինչպես հեռարձակումն էր դեկտեմբերի 3-ին, այնպես էլ այդ իրադարձության լրատվական լուսաբանումը: Հարցազրույցին հատկացված եթերային ժամանակը կազմեց ողջ մոնիտորինգի (հոկտեմբերի 26-ից դեկտեմբերի 4-ը) ընթացքում հետազոտված ծրագրերում ՀՀԿ-ի ստացած ժամանակի հանրագումարի 45%-ը: Ընդհանուր առմամբ, այս հարցազրույցի լուսաբանումը ՀԶ-ում կազմել է բոլոր վեց խորհրդարանական կուսակցություններին ողջ մոնիտորինգի ընթացքում հատկացված ժամանակի հանրագումարի 49.7%-ը, «Շանթում»՝ 36.1%, «Արմենիայում»՝ 30%, ինչն ինքնին թույլ չի տալիս խոսելու իրենց դիրքերը պաշտպանելու՝ քարոզարշավի մասնակիցների հավասար հնարավորությունների մասին (քանակի առումով): Մյուս երեք հեռուստաընկերություններում նախագահի հարցազրույցը նույնպես ստացել է ողջ մոնիտորինգի ընթացքում խորհրդարանական բոլոր կուսակցությունների ժամանակի հանրագումարի զգալի մասը՝ «Երկիր Մեդիայում»՝ 17.5%, «Կենտրոնում»՝ 13.9%, Հ1-ում՝ 11.7%:

Քարոզարշավի համար հատկացված վճարովի եթերաժամանակի բաշխումը ընդգծել է «այո»-ի և «ոչ»-ի արշավներում համապատասխանաբար ՀՀԿ-ի և ՀԱԿ-ի առաջատար լինելը: Հանրապետականների կողմից վճարված գովազդային ժամանակը կազմել է «այո»-ի ճամբարի կողմից օգտագործված ողջ վճարովի եթերի մոտավորապես 90%-ը և հետազոտված բոլոր հեռուստաալիքներում հանրաքվեի քարոզարշավի շրջանակներում վճարովի եթերի հանրագումարի մոտավորապես երկու երրորդը: Իսկ ՀԱԿ-ն ընդհանրապես «ոչ»-ի ճամբարում միակն էր, որը հնարավորություն է ունեցել վճարել եթերում քարոզի համար: Այս տվյալները վկայում են, առաջինը՝ հայաստանյան քաղաքական մյուս ուժերի համեմատությամբ իշխող կուսակցության ռեսուրսային զգալի առավելությունների մասին (միայն նա է օգտվել հետազոտված բոլոր վեց հեռարձակողների վճարովի եթերից և քարոզարշավի ողջ ընթացքում՝ հավասարաչափ), երկրորդը՝ ներկա պայմաններում հեռուստատեսությամբ քաղաքական գովազդի չարդարացված բարձր գների մասին (այս է վկայում է նաև այն փաստը, որ ամենապահանջարկվածը «Կենտրոն» հեռուստաալիքի վճարովի եթերն է եղել, որն առաջարկել է համեմատաբար մատչելի գներ):

Ինչ վերաբերում է քարոզչության համար Հ1-ի առաջարկած անվճար ժամանակին, ապա ՀՅԴ-ից բացի մյուս բոլոր խորհրդարանական կուսակցությունները սպառել են իրենց հասանելիք լիմիտը կամ առավելագույնս մոտեցել են դրան:

Մոնիտորինգի խմբի կողմից հետազոտության համար առանձնացված պայմանական «երրորդ կատեգորիան» (ԶԼՄ-ներ/լրագրողներ, միջպետական միջազգային կազմակերպություններ/արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ) հանրաքվեի թեմայով ամենաքիչն է արտահայտվել: Մոնիտորինգի երկրորդ (նոյեմբերի 6-19)

և երրորդ (նոյեմբերի 20 - դեկտեմբերի 4) փուլերում լրագրողներն իրենց հաղորդումներում Սահմանադրության փոփոխությունների մասին ավելի շատ էին սեփական կարծիքը հայտնում, քան առաջին փուլում (հոկտեմբերի 26 - նոյեմբերի 5): Ընդ որում, գրեթե միշտ պահպանում էին լիակատար չեզոքություն, ինչը կարելի է քարոզարշավի դրական բնութագրիչներից մեկը համարել: Բացառություն է կազմել մեկ էպիզոդ «Երկիր Մեդիայի» «Հանրության ձայնը» հաղորդման ժամանակ (որը կրկնվել է հաջորդ օրը), որտեղ հեղինակային տեքստը Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ դրական վերաբերմունք էր պարունակում: Միջպետական կառույցների ներկայացուցիչները արտահայտվում էին Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին, այդ թվում և՛ դրական (վեց անգամ՝ մոնիտորինգի բոլոր երեք փուլերում): Այս հանգամանքը կարելի է գնահատել որպես միակողմանի լուսաբանում՝ մասնավորապես Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման, որը Սահմանադրության փոփոխությունների նախագծի առնչությամբ նաև քննադատական դիտողություններ է ունեցել. դրանք սակայն հետազոտված հեռարձակվողների նյութերում տեղ չեն գտել:

Մոնիտորինգի ողջ ընթացքի արդյունքներով, հետազոտված ԶԼՄ-ներից հանրաքվեի լուսաբանման նկատմամբ առավել մեծ հետաքրքրությունը ցուցաբերել է «Կենտրոն» հեռուստաալիքը: Եթե առաջին պայմանական փուլից հետո այն զգալիորեն հետ էր մնում «Երկիր Մեդիայից», երկրորդ փուլից հետո ընդհուպ մոտեցավ առաջատարին, ապա երրորդ փուլից հետո թեմային հատկացված եթերաժամանակի ծավալով արդեն բավական առաջ էր անցել հետազոտված մյուս հեռարձակողներից: «Կենտրոն» առավել ինտենսիվ լուսաբանում էր քարոզարշավի մասնակից քաղաքական սեզմենտի և առաջին հերթին՝ խորհրդարանական քաղաքական ուժերի դիրքորոշումները, այդ ընթացքում համեմատաբար քիչ ուշադրություն հատկացնելով Սահմանադրության փոփոխությունների գործընթացի կապակցությամբ ձևավորված նախաձեռնություններին: Ընդ որում, այս ալիքում կողմ և դեմ կարծիքները ներկայացվել են հավասարակշռված՝ համապատասխանաբար 81 և 82:

Վերջին երկու շաբաթներում հանրաքվեի թեմայի լուսաբանման ակտիվությունը մի փոքր նվազեցրած «Երկիր Մեդիան» արդյունքում հատկացրած եթերաժամանակի ծավալով դարձել է երկրորդը: Դրա հետ մեկտեղ, այս հեռարձակողը դարձյալ ավելի բաց էր փորձագետների և քաղաքացիական հասարակության համար. այս խումբը «Երկիր Մեդիայի» հետազոտված ծրագրերում լուսաբանման ծավալով գերազանցել է խորհրդարանական կուսակցություններին, իսկ անդրադարձների հաճախականությամբ զիջել է միայն ՀՀԿ-ին և ՀՅԴ-ին: Հետազոտված բոլոր հեռուստաալիքներում փորձագետներին և քաղաքացիական հասարակությանը հատկացված ամբողջ եթերաժամանակի մոտավորապես կեսը (46%) բաժին է ընկել հենց այս հեռարձակողին: Չնայած այն հանգամանքին, որ վերջինները, ինչպես և մյուս ալիքներում, Սահմանադրության փոփոխությունների մասին հիմնականում բացասական էին արտահայտվում, «Երկիր Մեդիայում» «այո»-ի և «ոչ»-ի հարաբերակցությունը խորհրդարանական կուսակցությունների հաշվին 72:63 էր՝ հոգուտ Հիմնական օրենքի փոփոխությունների կողմնակիցների: Հասկանալի է, որ «ԲՀԿ»-ն հանրաքվեի կապակցությամբ իր դիրքորոշումներն արտահայտելու համար «Երկիր Մեդիայում» այդպես էլ եթերաժամանակ չստացավ: Վերադառնալով «Կենտրոնին»՝ նշենք, որ այստեղ նույնպես «ԲՀԿ»-ն գրեթե ուշադրության չի արժանացել, ստանալով ընդամենը 42 վայրկյան լուսաբանում: Հարկ է նաև նշել, որ «Երկիր Մեդիան» ամենահետևողականն է եղել հասարակ քաղաքացիների կարծիքներին (VoxPopuli) դիմելու տեսանկյունից: «Կենտրոն» այս խմբին հատկացրել է գրեթե նույնքան ժամանակ, որքան և «Երկիր Մեդիան», սակայն դրանք սոցիոլոգիական հարցման արդյունքներ են եղել:

Հանրաքվեի թեմային նվիրված եթերաժամանակով երկու առաջատարներից մեծ տարբերությամբ երրորդը Հ1-ն է գալիս: Ընդ որում, թեմային անդրադարձների հաճախականությամբ այն առաջ է անցել հետազոտված բոլոր հեռարձակողներից: ՀՀԿ-ից բացի, այստեղ համեմատաբար ինտենսիվ են լուսաբանվել ՀԱԿ-ը, «Ժառանգությունը» և «ՕԵԿ»-ը: Խորհրդարանական խմբակցություններ ունեցող մյուս երկու կուսակցությունները լուսաբանման ծավալով բավական հետ են մնացել: Հ1-ը հավատարիմ էր հետազոտված հեռուստաալիքների ընդհանուր միտումին՝ հենց Սահմանադրության փոփոխությունների գործընթացի կապակցությամբ ձևավորված քաղաքացիական նախաձեռնություններին չընկալել որպես քարոզարշավի՝ ուշադրության արժանի մասնակից, նրանց հատկացնելով խմբագրական լուսաբանման չնչին մասը: Հիմնական օրենքի փոփոխությունների նախագծին կողմ և դեմ արտահայտությունների հավասարակշռությունը հետազոտված ծրագրերում հանրային հեռարձակողը հիմնականում պահպանել է՝ 98:102 համապատասխանաբար:

«Արմենիա» հեռուստաալիքը հանրաքվեի թեմային նվիրված խմբագրական եթերաժամանակի ծավալով, մոխտորինգի երրորդ փուլի արդյունքներով, նկատելիորեն մեծացրել է Հ1-ի հետ ունեցած տարբերությունը: Մոնիտորինգի ողջ ընթացքում այս հեռուստաալիքում ՀՀԿ-ն և ՀԱԿ-ը էականորեն առաջ են ընկել այս ցուցանիշով երրորդ տեղում հայտնված «ՕԵԿ»-ից: Խորհրդարանում ներկայացված մյուս երեք քաղաքական ուժերը նույնիսկ «ՕԵԿ»-ից էին բավական հետ մնացել, իսկ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձևավորված քաղաքացիական նախաձեռնություններն այս հեռուստաալիքում, ինչպես նշվեց վերևում, հետազոտված ժամանակահատվածում ընդհանրապես եթերաժամանակ չեն ստացել, ընդ որում, մոնիտորինգի 40 օրերի ընթացքում ընդամենը 11 անգամ են հիշատակվել: Սահմանադրության փոփոխությունների նախագծի շուրջ արտահայտությունների նշանային բնութագրիչների հարաբերակցությունը «Արմենիայի» հետազոտված ծրագրերում 32:58 է՝ հոգուտ բացասականների:

Հ2-ը մոնիտորինգի պայմանական երրորդ փուլում ակտիվացրել է հանրաքվեի թեմայի լուսաբանումը և թեմային հատկացված եթերաժամանակով և անդրադարձներով որոշ չափով առաջ է անցել «Շանթից»: ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն և «Ժառանգությունը» (խորհրդարանական կուսակցություններից), ինչպես նաև անկախ պատգամավորներ/արտախորհրդարանական կուսակցություններ պայմանական խումբը այս հեռարձակողի կողմից արժանացել են շատ ավելի էական ուշադրության, քան «ԲՀԿ»-ն, ՀԱԿ-ը և «ՕԵԿ»-ը: «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ նախաձեռնությունը Հ2-ում ավելի մեծ ծավալի խմբագրական եթերաժամանակ է ստացել, քան մյուս հինգ հետազոտված հեռարձակողների եթերում՝ միասին վերցրած: Արտահայտությունների նշանային բնութագրիչի ընդհանուր հավասարակշռությունը բացասականների օգտին է՝ 26:50:

«Շանթը», Հ2-ի նման, էականորեն հետ է մնում հետազոտված հեռուստաալիքների՝ հանրաքվեի թեման քիչ թե շատ ակտիվ լուսաբանող քառյակից: Խորհրդարանական երեք կուսակցությունները՝ ՀՀԿ, ՀԱԿ և «Ժառանգություն», խմբագրական լուսաբանման առումով նկատելի առավելություն են ունեցել ինչպես մյուս երեքի նկատմամբ՝ «ԲՀԿ», «ՕԵԿ» և ՀՅԴ, այնպես էլ՝ անկախ պատգամավորների և արտախորհրդարանական կուսակցությունների նկատմամբ: Ի դեպ, այն բանի հաշվին, որ մյուսների նկատմամբ առավելություն ունեցող կուսակցությունների «ցանկը» տարբեր ալիքներում տարբեր է եղել, լսարանը, ինչպես արդեն նշվեց վերևում, ընդհանուր առմամբ հնարավորություն է ունեցել ծանոթանալու բոլոր դիրքորոշումներին: «Շանթը» հետազոտված հեռարձակողների մեջ միակն է եղել, որտեղ

պայմանական «երրորդ կատեգորիայի» ներկայացուցիչները (ԶԼՄ-ներ/լրագրողներ, միջպետական միջազգային կազմակերպություններ/արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ) Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ընդհանրապես չեն արտահայտվել: Դրական և բացասական արտահայտությունների ընդհանուր հավասարակշռությունը «Շանթում» վերջինի օգտին է՝ 21:41: Այսպիսով, այս ցուցանիշով, «Արմենիայի», ՀՀ-ի և «Շանթի» հետազոտված ծրագրերը պարունակում էին Սահմանադրության փոփոխությունների նախագծի նկատմամբ ամենից անբարենպաստ նշանային բնութագրիչը:

Իրականացված մոնիտորինգը երևան է հանել հանրաքվեների քարոզարշավների նորմատիվ-օրենսդրական կարգավորման, իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման, ինչպես նաև՝ հեռարձակվող ԶԼՄ-ների՝ լսարանի շահերին առավելագույնս համապատասխանող խմբագրական քաղաքականության մշակման, մասնագիտական նորմերի և ԶԼՄ-ների ինքնակարգավորման մեխանիզմների արդյունավետ կիրառման անհրաժեշտությունը: Դրանից բացի, վերևում բերված, ինչպես նաև աղյուսակներում ներկայացված քանակական տվյալները կարող են որպես հիմք ծառայել Սահմանադրության փոփոխությունների համատեքստում երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացների վերլուծության համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ներում ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի լուսաբանման մոնիտորինգն իրականացվել է Երևանի մամուլի ակումբի կողմից՝ Եվրամիության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Աջակցություն պրոֆեսիոնալ և որակյալ լրագրությանը՝ Ինքնակարգավորման մարմինների տարածաշրջանային ցանցի միջոցով» ծրագրի շրջանակներում: Մոնիտորինգն անցկացվել է հանրաքվեին նախորդող քարոզարշավի ընթացքում՝ **2015թ. հոկտեմբերի 26-ից դեկտեմբերի 4-ը**: Հետազոտության միջանկյալ արդյունքները ներկայացվել են փուլ առ փուլ՝ 2015թ. հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 5-ը, 2015թ. նոյեմբերի 6-19-ը և 2015թ. նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 4-ը: Մոնիտորինգի ավարտին հրապարակվել է վերջնական հաշվետվությունը, որն ընդգրկել է հետազոտության ողջ ժամանակահատվածը:

Մոնիտորինգի նպատակն էր՝ ստացված քանակական և որակական տվյալների վերլուծության միջոցով բացահայտել.

- որքանով են հետազոտվող հաղորդումներում, ինչպես նաև հանրաքվեի վճարովի և անվճար քարոզչության բլոկներում պահպանվել ՀՀ օրենսդրության համապատասխան պահանջները,

- ինչ աստիճանի են հետազոտվող հաղորդումներն արտացոլել ՀՀ Սահմանադրության փոփոխությունների շուրջ կարծիքների բազմազանությունը,

- որքանով է հայաստանյան հեռուստալսարանն՝ ընդհանրապես և հետազոտվող ալիքներից յուրաքանչյուրինը՝ մասնավորապես, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի նկատմամբ տարբեր դիրքորոշումների ծանոթանալու հնարավորություն ստացել:

Հետազոտությունն ընդգրկել է 6 համազգային հեռարձակվող ՁԼՄ.

- Հայաստանի Հանրային հեռուստատեսության Առաջին ալիք (Հ1)
- 5 մասնավոր հեռուստաալիք՝ «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2), «Շանթ»:

Վերը նշված հեռուստաալիքներում հետազոտվել են՝

- լրատվական/լրատվական-վերլուծական հաղորդումների հիմնական թողարկումները և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները, որոնք հեռարձակվել են քարոզարշավի ժամանակ (**2015թ. հոկտեմբերի 26 - դեկտեմբերի 4**)
- 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի անվճար և վճարովի քարոզչության բլոկները, որոնք հեռարձակվել են **2015թ. նոյեմբերի 6-ից** (քարոզչության համար էթերաժամանակի տրամադրման մեկնարկ) մինչև **դեկտեմբերի 4-ը**:

Մոնիտորինգի օբյեկտ են հանդիսացել բոլոր այն հեռուստանյութերը, որոնք պարունակում էին ՀՀ Սահմանադրության փոփոխություններին հասարակության տարբեր սեգմենտների ներկայացուցիչների ցանկացած տիպի անդրադարձները:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

I. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստայություն** էր:

Հեռուստայություն ասելով հասկացել ենք.

էթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

- լրատվական ծրագրի առանձին սյուժեն,
- հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,
- հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ (միջարկում, բլյում և այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում էր տարբեր թեմաների/հիմնախնդիրների,
- սյուժեների ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրև այն նյութի մաս, որին վերաբերում էին,
- հեռուստասյուժեին (ռեպորտաժին և այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է իբրև այդ սյուժեի (ռեպորտաժի և այլն) մաս:

Ընդամին.

- **Լրատվական/լրատվական-վերլուծական ծրագրերը** բաժանվել են սյուժեների, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ,
- **Հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները** դիտարկվել են հետևյալ կերպ.
 1. Եթե հաղորդումն ամբողջովին նվիրված էր մեկ թեմայի, ապա այն դիտարկվել է որպես մեկ ինքնուրույն նյութ,
 2. Եթե հաղորդումը կառուցված էր խճանկարային սկզբունքով, այն է՝ բաժանված էր ինքնուրույն թեմատիկ բաժինների, ապա այդ բաժիններից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ:

II. Հասարակության տարբեր սեգմենտների ներկայացուցիչները դասակարգվել են երեք պայմանական կատեգորիաների, որոնք իրենց հերթին բաժանվել են խմբերի:

Պայմանական «**առաջին կատեգորիայում**» մեկ խումբ է ընդգրկվել.

ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունները/ կուսակցությունները	«Հանրապետական» (ՀՀԿ)
	«Բարգավաճ Հայաստան»
	«Հայ ազգային կոնգրես»
	«Օրինաց երկիր»
	«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»
	«Ժառանգություն»

Պայմանական «երկրորդ կատեգորիայում» 4 խումբ է ընդգրկվել.

1.	ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ և արտախորհրդարանական կուսակցություններ
2.	Քաղաքացիական հասարակություն, փորձագիտական հանրություն, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ
3.	ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձևավորված նախաձեռնությունների ներկայացուցիչներ. «Չե՛ք անցկացնի» քաղաքացիական նախաձեռնություն և «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ
4.	Vox Populi

Պայմանական «երրորդ կատեգորիայում» 2 խումբ է ընդգրկվել.

1.	ԶԼՄ-ներ և լրագրողներ
2.	Միջպետական միջազգային կազմակերպություններ և արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ

III. Մոնիտորինգի ընթացքում բացահայտվել և արձանագրվել են.

1. Հետազոտված հեռուստանյութերի ընդհանուր քանակը:

2. Մոնիտորինգի թեմային նվիրված հեռուստանյութերի քանակը:

3. Առաջին երկու պայմանական կատեգորիաների խմբերի անդրադարձերը Հանրաքվեի թեմային հետազոտվել են հետևյալ կերպ.

- Չափվել է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին խմբերի ներկայացուցիչների արտահայտություններին հատկացված **երթրային ժամանակը (վայրկյան)**,
- Հաշվարկվել է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին խմբերի ներկայացուցիչների արտահայտությունների/դիրքորոշումների **հիշատակումների/հղումների քանակը (միավոր)**,
- Տարբերակվել է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ խմբերի ներկայացուցիչների **վերաբերմունքը (միավոր)՝ դրական (+), բացասական (-) կամ չեզոք (0):**

Վերաբերմունքի նշանային բնութագրիչ ասելով (դրական կամ բացասական) հասկացել ենք խմբերի ներկայացուցիչների՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես

նաև՝ դրա հնարավոր ընդունման օգտին (+) կամ դեմ (-)
արտահայտությունների/դիրքորոշումների մեջբերումը նյութում:

Ընդամին, վերաբերմունքի **նշանային բնութագրիչը** և **եթերաժամանակը** արձանագրվել են միայն այն դեպքերում, երբ նյութում բերվում էր փոփոխությունների բովանդակության, որևէ կոնկրետ ասպեկտի մասին խմբերի ներկայացուցիչների կարծիքը, կամ հստակ բարձրաձայնվում էր նախագծին «կողմ» կամ «դեմ» նրանց դիրքորոշումը: Իսկ եթե խմբերի ներկայացուցիչները արտահայտվում էին հանրաքվեի անցկացման ընթացակարգի կամ դրա հետ կապված որևէ հարցի շուրջ՝ առանց նախագծի բովանդակային մասի գնահատականի կամ քվեարկության հետ կապված դիրքորոշման, այդ դեպքում նման արտահայտությունները (անկախ այն բանից՝ դրանք կտրուկ քննադատական են եղել թե միանշանակ խրախուսական) գնահատվել են իբրև չեզոք, և դրանց հատկացված **եթերաժամանակը** չի արձանագրվել, քանի որ այդ արտահայտությունները չեն առնչվել մոնիտորինգի հիմնական թեմային:

Եթե նյութում հիշատակվում էին տարբեր խմբերի կամ նույն խմբի մի քանի ներկայացուցիչ, ապա այդ բոլոր **հիշատակումները** արձանագրվում էին համապատասխան խմբում՝ իրենց նշանային բնութագրիչով:

4. Պայմանական երրորդ կատեգորիայի խմբերը հետազոտվել են հետևյալ կերպ.

- Չափվել է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին խմբերի ներկայացուցիչների արտահայտություններին հատկացված **եթերաժամանակը** (*վայրկյան*),
- Հաշվարկվել է ՀՀ Սահմանադրության փոփոխություններին խմբերի ներկայացուցիչների **անդրադարձների** քանակը (*միավոր*),
- Տարբերակվել է ՀՀ Սահմանադրության փոփոխություններին խմբերի ներկայացուցիչների **անդրադարձների բնույթը** (*միավոր*)՝ **դրական (+), բացասական (-) կամ չեզոք (0):**

ԶԼՄ-ներ/լրագրողներին և միջպետական միջազգային կազմակերպություններ/արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներին մեկ կատեգորիայում առանձնացնելը պայմանավորված է եղել այդ՝ բանավեճի կողմեր չհանդիսացող խմբերի առաձևահատուկ դերով: Առաջինների առաքելությունն է առավելագույնս անկողմնակալ կերպով տրամադրել հնարավորինս լիարժեք, բազմազան և բազմակողմանի տեղեկատվություն՝ Սահմանադրության փոփոխությունների և հանրաքվեի հետ կապված հարցերի շուրջ՝ օգնելու քաղաքացիներին կատարել գիտակցված ընտրություն: Իսկ միջազգային/արտասահմանյան կառույցների խնդիրը ըստ էության պետք է լինի աջակցել ժողովրդավարական փոփոխություններին, իրականացնել փորձագիտական համագործակցություն և հետևել տեղի ունեցող գործընթացներին:

Ելնելով վերոշարադրյալից, այս երկու խմբերի ներկայացուցիչների **անդրադարձները** հանրաքվեի թեմային արձանագրվել են միայն այն դեպքերում, երբ նրանք հանդես են եկել իրենց հիմնական կարգավիճակով (մասնավորապես, եթե լրագրողը հանդես է եկել որպես հեռուստահաղորդման հեղինակ կամ վարող): Մյուս բոլոր դեպքերում մոնիտորները նրանց

դիտարկել են այլ կատեգորիաների (խմբերի) մեջ, օրինակ, հարցազրույց տվող լրագրողը, կախված կոնկրետ դեպքից, նյութում նրան ներկայացնելու ձևից, կարող էր դիտարկվել որպես փորձագետ, քաղաքացիական նախաձեռնության անդամ և այլն:

Բ. ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԲԼՈՎԿՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի անվճար և վճարովի քարոզչության բլոկները հետազոտվել են **2015թ. նոյեմբերի 6-ից** (խմբերին/նրանց ներկայացուցիչներին քարոզչության համար եթերաժամանակի տրամադրման պահից) մինչև **դեկտեմբերի 4-ը**: ԶԼՄ-ներում քարոզչության մեկնարկի ժամկետը պայմանավորված էր քվեարկությունից 30 օր առաջ հանրային հեռարձակողի եթերում քարոզչությանը ժամանակ հատկացնելու մասին օրենսդրական դրույթով:

Բլոկների կատեգորիաները սահմանելիս որպես հիմք են ընդունվել այն խմբերը, որոնք «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով կարող են քարոզչություն իրականացնել. «Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ օրենքով չարգելված ձևերով և միջոցներով քարոզչություն կատարելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, հանրաքվե անցկացնելու նախաձեռնության հեղինակը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները (պատգամավորական խմբերը), կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները» (20-րդ հոդված, կետ 1):

Այս բաժնի մեթոդաբանության համար որպես հիմք է ընդունվել նաև ՀՀ ԿՐՀ կողմից հաստատված կարգը, որով հանրային հեռարձակողի եթերում քարոզարշավ անցկացնելու համար անվճար և վճարովի ժամանակ է հատկացվել խորհրդարանական խմբակցություններին:

Համապատասխանաբար՝ մոնիտորինգի ընթացքում արձանագրվել է թվարկված հետևյալ կատեգորիաներին (խմբերին) անվճար և վճարովի քարոզչության համար հատկացված եթերաժամանակը (*վայրկյան*).

ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունները/ կուսակցությունները	«Հանրապետական» (ՀՀԿ)
	«Բարգավաճ Հայաստան»
	«Հայ ազգային կոնգրես»
	«Օրինաց երկիր»
	«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»
	«Ժառանգություն»
Քաղաքական կուսակցություններ	
Հասարակական կազմակերպություններ	
ՀՀ քաղաքացիներ	
ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի անցկացման նախաձեռնության հեղինակ (ՀՀ նախագահ)	

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ

ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ (Հ1) - 2001թ.

հիմնադրված Հանրային հեռուստառադիոընկերության բաղկացուցիչ մասն է: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Հ1-ի օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել. «Առաջին լրատվական» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-կիրակի՝ 21.00), «Տեսանկյուն» (երկուշաբթի-ուրբաթ՝ 21.35), «Հարցազրույց» (երկուշաբթի-հինգշաբթի՝ 21.40), «Եռանկյունի» (Հ1-ով սկսել է եթեր դուրս գալ նոյեմբերի 6-ից ուրբաթ օրերին՝ 21.35) և «Օրակարգ» (նոյեմբերի 21-ից շաբաթ օրերին՝ 21.35) հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Բացի դրանից, հետազոտության առանձին առարկա է դարձել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը հայաստանյան հեռուստաընկերությունների ներկայացուցիչներին, որը հեռարձակվել է 2015թ. դեկտեմբերի 3-ին և նվիրված է եղել ՀՀ Սահմանադրության փոփոխություններին և առաջիկա հանրաքվեին:

«ԱՐՄԵՆԻԱ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998թ.:

Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել. «Ժամ» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 20.00), «Բանաձև» (20.00) և «Սուր անկյուն» (22.00) կիրակնօրյա լրատվական-վերլուծական ծրագրերը, «R-Էվոլյուցիա» կիրակնօրյա բանավիճային ծրագիրը (23.30): Բացի դրանից, հետազոտության առանձին առարկա է դարձել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը հայաստանյան հեռուստաընկերությունների ներկայացուցիչներին, որը հեռարձակվել է 2015թ. դեկտեմբերի 3-ին և նվիրված է եղել ՀՀ Սահմանադրության փոփոխություններին և առաջիկա հանրաքվեին:

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2004թ.:

Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել. «Երկիրն այսօր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 20.30), «Երկրի շաբաթը» կիրակնօրյա լրատվական-վերլուծական ծրագիրը (22.30), «Հանրության ձայնը» ամենօրյա լրատվական ծրագիրը (երկուշաբթի-կիրակի՝ 21.15) «Երկրի հարցը» (երկուշաբթի-ուրբաթ՝ 23.05), «Կլոր սեղան» (չորեքշաբթի՝ 21.40) և «Բարձրաձայն» (հինգշաբթի՝ 21.40) հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Բացի դրանից, հետազոտության առանձին առարկա է դարձել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը հայաստանյան հեռուստաընկերությունների ներկայացուցիչներին, որը հեռարձակվել է 2015թ. դեկտեմբերի 3-ին և նվիրված է եղել ՀՀ Սահմանադրության փոփոխություններին և առաջիկա հանրաքվեին:

«ԿԵՆՏՐՈՆ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2004թ.:

Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել. «Էպիկենտրոն» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-

կիրակի՝ 21.30), «Անցում Դույյանի հետ» (երկուշաբթի-ուրբաթ՝ 22.10), «Ուրվագիծ» (երկուշաբթի-հինգշաբթի՝ 22.25) և «Հայկական ուրբաթ» (ուրբաթ՝ 22.25) հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Բացի դրանից, հետազոտության առանձին առարկա է դարձել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը հայաստանյան հեռուստաընկերությունների ներկայացուցիչներին, որը հեռարձակվել է 2015թ. դեկտեմբերի 3-ին և նվիրված է եղել ՀՀ Սահմանադրության փոփոխություններին և առաջիկա հանրաքվեին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ (Հ2) - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 18 ժամ: Հետազոտության առարկա են եղել. «Լրաբեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 20.00) և «Չորրորդ ստուդիա/Խոսքի իրավունք» բանավիճային հաղորդումը (երկուշաբթի-ուրբաթ՝ 20.40): Բացի դրանից, հետազոտության առանձին առարկա է դարձել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը հայաստանյան հեռուստաընկերությունների ներկայացուցիչներին, որը հեռարձակվել է 2015թ. դեկտեմբերի 3-ին և նվիրված է եղել ՀՀ Սահմանադրության փոփոխություններին և առաջիկա հանրաքվեին:

«ՇԱՆԹ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1994թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել. «Հորիզոն» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 22.00, նոյեմբերի 26-ին հետազոտության առարկա է դարձել 18.00-ի թողարկումը՝ բարեգործական մարաթոնի հեռարձակման կապակցությամբ) և «Հորիզոնի» շրջանակներում հեռարձակվող «Հեռանկար» բանավիճային հաղորդումը: Բացի դրանից, հետազոտության առանձին առարկա է դարձել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը հայաստանյան հեռուստաընկերությունների ներկայացուցիչներին, որը հեռարձակվել է 2015թ. դեկտեմբերի 3-ին և 4-ին և նվիրված է եղել ՀՀ Սահմանադրության փոփոխություններին և առաջիկա հանրաքվեին:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

2015թ. հոկտեմբերի 26 - դեկտեմբերի 4

(ամփոփիչ)

2015թ. հոկտեմբերի 26 - դեկտեմբերի 4

Հեռուստահաղորդումներում խմբերի ներկայացուցիչներին հատկացված եթերային ժամանակը, հիշատակումների/հղումների, անդրադարձների եւ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը

Հայաստանի Հանրային հեռուստատեսության Առաջին ալիք (Հ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2), «Շանթ»

Հետազոտված հեռուստանյութերի ընդհանուր քանակը			5101				
Մոնիտորինգի թեմային նվիրված հեռուստանյութերի քանակը			408				
Խմբերը			ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին խմբերի ներկայացուցիչների արտահայտություններին հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)	ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին արտահայտությունների/ դիրքորոշումների հիշատակումների/հղումների քանակը (միավոր)	Խմբերի ներկայացուցիչների վերաբերմունքը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ (միավոր)		
					+	-	0
1.	ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունները/ կուսակցությունները	«Հանրապետական» (ՀՀԿ)	48607.6	293	139	1	153
		«Բարգավաճ Հայաստան»	489.6	63	26	0	37
		«Հայ ազգային կոնգրես»	22387.1	153	1	77	75
		«Օրինաց երկիր»	7614.6	54	0	18	36
		«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»	14888.6	128	78	0	50
		«Ժառանգություն»	13866.5	102	4	57	41
Ընդամենը (առաջին խմբի համար)			107854	793	248	153	392
2.	ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ եւ արտախորհրդարանական կուսակցություններ		10641.5	104	22	60	22
3.	Քաղաքացիական հասարակություն, փորձագիտական հանրություն, ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ		26373	205	41	98	66
4.	ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կապակցությամբ ձեւավորված նախաձեռնությունների ներկայացուցիչներ	«Չե՛ք անցկացնի» քաղաքացիական նախաձեռնություն	1929	12	0	12	0
		«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ	962.5	67	0	62	5
5.	Vox Populi		2125	33	11	11	11
Ընդամենը (2-5 խմբերի համար)			42031	421	74	243	104
			ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մասին կարծիքների արտահայտմանը հատկացված եթերային ժամանակը (վայրկյան)	ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների քանակը (միավոր)	ՀՀ Սահմանադրության փոփոխություններին անդրադարձների բնույթը (միավոր)		
					+	-	0
6.	ԶԼՄ-ներ եւ լրագրողներ		903	20	2	0	18
7.	Միջպետական միջազգային կազմակերպություններ եւ արտասահմանյան երկրների պաշտոնական ներկայացուցիչներ		294	18	6	0	12
Ընդամենը (6-7 խմբերի համար)			1197	38	8	0	30

2015թ. նոյեմբերի 6 - դեկտեմբերի 4

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի քարոզչության համար խմբերին/դրանց ներկայացուցիչներին հատկացված եթերային ժամանակը

Հայաստանի Հանրային հեռուստատեսության Առաջին ալիք (Հ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2), «Շանթ»

Խմբերը		2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի քարոզչությանը հատկացված եթերային ժամանակը		
		Վճարովի (վայրկյան)	Անվճար (վայրկյան)	
1.	ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբակցությունները/ կուսակցությունները	«Հանրապետական» (ՀՀԿ)	24292	3600
		«Բարգավաճ Հայաստան»	419	3434
		«Հայ ազգային կոնգրես»	10309	3522
		«Օրինաց երկիր»	0	3269
		«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»	2654	2102
		«Ժառանգություն»	0	3422
Ընդամենը (առաջին խմբի համար)		37674	19349	
2.	Քաղաքական կուսակցություններ	0	0	
3.	Հասարակական կազմակերպություններ	0	0	
4.	ՀՀ քաղաքացիներ	0	0	
5.	ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի անցկացման նախաձեռնության հեղինակ (ՀՀ նախագահ)	0	0	
Ընդամենը (2-5 խմբերի համար)		0	0	

2015թ. հոկտեմբերի 26 - դեկտեմբերի 4

Հեռուստահաղորդումներում խմբերի ներկայացուցիչներին հատկացված եթերային ժամանակը, հիշատակումների/հղումների, անդրադարձների եւ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը

Հայաստանի Հանրային հեռուստատեսության Առաջին ալիք (Հ1)

